Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՀԱՅՐԸ և ՈՐԴԻՆ

ՓՈԽ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

ՆԿ. Վ. ԱՂԱԲԱԲՅԱՆԻ





CA 186

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

891.71 Ս.
Հ-30

## ՀԱՐԲԵՑՈՂԸ և ՊՐՈԳՈՒԼՇԻԿԸ ՔԱՆԴՈՒՄ ԵՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ

# ՀԵՌԱՑՆԵԼ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԴՌՆԵՐԻՑ



### ՎԵՐԱՑՆԵՆՔ ՃԵՂՔՎԱԾՔԸ

Գործարանի գլխավոր մուտքի մոտ կանգնած էր պիոներ Լևոն Աթոյանը։

Նա նայում էր պատերին փակցրած թերթերին. ամեն տեղ աչքի յեր ընկնում մեծ-մեծ տառերով մի բառ — «ՃԵՂՔՎԱԾՔ»։

Ցանկապատին փակցրած էյին գույնզգույն լոզունգներ. «Հարբեցողը յեվ պրոգուլշիկը քանդում են գործարանը»։

«Հեռացնել նրանց գործարանի դռներից»

Վերջինը Լևոնը շատ հավանեց, թռչկոտում էր ու յերգում.—

Հեռացնել նրանց
Հեռացնել նրանց
Գործարանների
Կարմիր դռներից։

## ԳԻՆԻՆ ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆ Է





Հանկարծ կանգ առավ և լըռեց։ Հիշեց, վոր իր հայրն էլ է հարբեցող։

Մտքերով տարված՝ Լևոնը աննկատելի կերպով մոտեցավ շուկային։ Հեռվից նա նկատեց իր մորը և ցանկացավ բազմության մեջ խառնվել, վոր մայրը չնկատի։ Բայց արդեն կինը նկատեց տղային և ձայն տվեց.

Լևոն, Լևոն, ինչ լավ էր, վոր յեկար. տեսնում ես ինչ հերթ է. առավոտից կանգնել եմ այս անտեր գինու հերթին... Ոհ, հոգնեցի, համբերությունս հատավ, վայ, ինչ եմ մոռացել տանը, թխվածքներս փուռն եմ դրել, հո այրված կլինի։ Ա՛ռ, ա՛ռ չերվոնեցը, դու կանգնիր, մի յես տուն վազեմ, վայ թխվածքներս... Լավ գինի կվերցնես, հա՛...

Կողովը վերցրեց և անհայտացավ։

1 0 JUN 2013
3936







## ԳՆԱԼ ԹԵ ՉԳՆԱԼ

Լեվոնը կանգնած վորոշում էր ձեռքում մոր տված փողը և չգիտեր ինչ անել։

«Պիոներ կոլեկտիվում ժողով ունենք, անհրաժեշտ ժողով, պետք է շտապել...։ Ի՞նչ անեմ... հերթի կանգնեմ, գինի գնեմ, թե՞ գնամ ժողովի։

Իսկ յեթե կոլեկտիվի ընկերներից մեկը նկատի՝ ամոթ է։ Չգնամ՞ չի լինի. այսօր հորս տոնախմբությունն է, նա չի ների ինձ՝ յեթե այս յերեկո գինի չունենա»։

Լեվոնը համարձակ քայլերով մոտեցավ գինու յերկար հերթին և կանգնեց վերջին։

Լեվոնի հերթը մոտեցավ, նա չերվոնեցը մեկնեց դեպի պատուհանը. հանկարծ լսվեց մի համարձակ ձայն.

— Լեվոն Աթոյան։

ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀԱՍԽ-Арм ССР

56747-66



-6 NOV 2011



Լեվոնի ձեռքերը թուլացան հետ քաշվեց։

Լեվո՛ն, այստեղ ի՞նչ գործ ունես. ժողով չես գալիս, — ասաց կարմրաթշիկ կովվար Կիմ Սիմոնյանը։

Յես- յես... հորս համար է, մայրս է ուղարկել, — ասաց Լեվոնը։

Դե, գնանք, Լեվո՛ն, պիոներին վայել չէ գինի գնել, գընանք ժողով։

Լեվոնը մտազբաղ քայլում էր Կիմի կողքով ձեռքի մեջ ճմռելով չերվոնեցը։

—Հը՛ ի՞նչ ես մտածում, — ասաց Կիմը։

Յես փախենում եմ տուն վերադառնալ։

— Լավ, մինչև ժողովի սկիզբը կես ժամ կա, գնանք մորդ մոտ։



ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Կիմն ու Լևոնը կանգնած էին Աթոյանի սենյակում. մայրը դասավորում էր թխվածքները ափսեների մեջ. Լևոնը քաշվեց դեպի պատուհանը, իսկ Կիմը ձեռքերը գրպանը դրած կանգնեց Լևոնի մոր դիմաց.

— Լևոն, ո՞ւր է գինին,— հարցրեց մայրը:



— Ընկեր Աթոյան, յես արգելեցի. Լևոնը մեղավոր չէ.

— Սա ո՞վ է, փողոտեղից դուրս ընկավ, տեսեք մի ես լակոտին է... Լևոն, ո՞ւր է գինին.

Լևոնը լուռ էր.

— Ընկեր Աթոյան, պիոներին գինի գնել չի կարելի,— պատասխանեց Կիմը.

— Լևոն, ինչո՞ւ չես բերել, ուրեմն մորդ խոսքը գետին ես գցել, հա... Թեև վոչինչ, ելի. Հարազատ որդին մորը չի ցանկանում օգնել. Նո- Կորի, կորի իմ տնից. Հա.

ռացիր քո փաստաբան ընկերոջդ հետ.

Լևոնն ու Կիմը լուռ դուրս յեկան և քայլերն ուղղեցին պիոներական ակումբ.

Բոլորն անհամբեր սպասում էին այս խորհրդավոր ժողովին, բոլորի դեմքերը լուրջ կերպարանք էին ստացել.




Ժողովը բացվեց Կիմի նախագահությամբ.

Օրակարգում գրված էր մի հարց.

«Պիոներների դերը ձեռվածքները վերացնելու խնդրում».

Նախագահը պարզեց պիոներների անելիքները. Ժողովը բուռն վոգևորությամբ ընդունեց Կոլյայի զեկուցումը, առաջարկեց կոնկրետ միջոցներ և վորոշեց վաղվանից անցնել աշխատանքի.

Լևոնը փնջերեց Կիմի մոտ.



Նրա աչքերից չէր հեռանում գործարանի ցանկապատից փակցրած թերթիկը՝ «Հեռացնել նրանց գործարանի դռներից»։

Հետևյալ առավոտ ժամը վեց և կեսին Լևոնը նշանակված էր գործարանի մեծ մուտքի մոտ հերթապահ։



Յերկար ու զիլ արձագանքով սուլեց յերկրորդ սուլիչը, Լևոնի սիրտն սկսեց յաքոխել, նա մտածում էր թե ինչ ձևով խոսի առաջին ուշացող բանվորի հետ։

Բանվորները լցվել էին նեղ միջանցքները և սպասում էին յերրորդ սուլիչին։

Ահա և յերրորդ սուլիչը կարճ և խիստ։

Բոլորն անցան գործի։

Հերթապահ ծառան բարեհամբույր ծիծաղում էր՝ նայելով Լևոնին։



«Ես ինչ հնարեցին, թղթիկներին հակիչ կարդեցին։»

Լևոնն այն և հուզված ցանկանում էր պատասխանել ծառային, հանկարծ մի բանվոր արագ քայլերով մոտեցավ գլխավոր մուտքին։

Լևոնն առանց նայելու բանվորի դեմքին, պատնեշի նման կանգնեց դռան միջում և խիստ համարձակ ձայնով ասաց.

«Ընկեր, դու ուշացել ես, այդ լավ չե»։




Հանկարծ Լևոնը սարսափած հետ քաշվեց, ձեռքերը թուլացան, ձայնը դողաց։

Նրա առաջ կանգնած էր իր հայրը։

— Լևոն, դու այստեղ ինչ ես շինում։

Նա չէր հասկանում ինչու յե Լևոնն այստեղ, չէր էլ ուզում հասկանալ, նա շտապում էր շուտ ներս մտնել գործա-







րան, բայց պետք է տղային հրել։ Հանկարծ հիշեց նախընթաց օրվա զինաւ պատմությունը, գիշերվա կռիվը, տղայի անհայտանալը, այս բոլորը կապելով տղայի այսօրվա վերաբերմունքին՝ կատաղած հրեց նրան, որ անցնի։

Լևոնը, նկատելով ծառայի հեգնական ժպիտը, ավելի պինդ կանգնեց իր տեղը։

Հայրը կատաղեց։

– Կորեք այստեղից, – գոռաց նա և տղային մի կողմ հրելով՝ ներս վազեց։

Ծառան հեգնանքով ժպտաց և ասաց.

– Ամեն տեղ քիթդ մի կոխիր։






Լևոնը հիշեց Կիմի խոսքերը՝ «Պիոներներ, յեղեք պատրաստ վերացնելու գործարանի ճեղքվածքները»։

Լևոնը վրդովված մոտեցավ սև տախտակին և սպիտակ կավիճով գրեց.

«Մեխանիկական մասի բանվոր ընկ. Աթոյանը կես ժամ պրոգուլ ունեցավ»

Մեկ անգամ բարձրաձայն կարդաց իր մեծ-մեծ տառերով գրած նախադասությունը, և գոհ սրտով [illegible] մոտ պատմելու իր հերթապահության մասին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0390507

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
ի. им А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ

ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՃԵՂՔՎԱԾՔՆԵՐԸ

ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.



ОТЕЦ И СЫН

ГИЗ С.С.Р. АРМЕНИИ ЭРИВАНЬ

1931

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Акад.

Պատվերտ № 1781   Գլավլիտ № 6700 (բ)
Տիրաժ 4000   վեմ   պետհրատի պատ   № 4267

